

ՓԻԼՈՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑՈՒ ԵՐԿԵՐԻ
ԳՐԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԼԵԶՎԱԿԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գ. Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Փիլոն Ալեքսանդրացու երկերի հայերեն թարգմանությունները պատկանում են հունաբան զպրոցի¹ առաջին շրջանի գործերի թվին: Ինչպես ողջ զպրոցի, այնպես էլ Փիլոնի թարգմանությունների թվագրումը վեճերի առիթ է եղել հայագիտության մեջ. թերևս ավելի հավանական է, որ դրանք իրագործվել են V դարի երկրորդ կեսին²:

Չնայած Փիլոնի երկերի հայերեն թարգմանությունները պարունակում են հունաբանությունների բոլոր տեսակները, դրանք հեռու են այնպիսի թարգմանություն լինելուց, որի դեպքում յուրաքանչյուր հունարեն բառ կունենար իր ուղղակի հայերեն պատճենումը: Ավելին, տառացիության այդպիսի «իդեալական» մակարդակ չես գտնի և այնպիսի գիտական բնագրերում, ինչպիսիք են Դիոնիսոս Թրակացու Քերականությունը³, Ափթոնիոսի Նախակրթությունները⁴ և նույնիսկ Արիստոտելի Ստորոգությունները⁵:

Ինչպես նկատել է Ա. Տերյանը, Փիլոնի թարգմանություններում մեկ հունարեն բառը կարող է ունենալ տարբեր հայերեն համարժեքներ, և միևնույն հայերեն բառը կարող է համապատասխանել տարբեր հունարեն բառերի⁶: Այդ հանգամանքն արդեն դարասկզբին ստիպել է Հ. Լևինին հրաժարվել Փիլոնին վերագրված «Յաղաբու Յովնանու» ճառի կորսված հունարեն սկզբնա-

¹ Հունարան զպրոցի և հունարան լեզվի մասին տե՛ս Н. Адонц. Дионисий Фракийский и армянские толкователи. Пр., 1915; Հ. Մանանդյան. Հունարան զպրոցը և նրա դարգացման շրջանները. Վիեննա, 1928; Հր. Աճառյան. Հայոց լեզվի պատմություն. Ժառ II. Երևան, 1951, էջ 142—168: Գ. Ջահուկյան. Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում. Երևան, 1954; Ա. Մուրադյան. Հունարան զպրոցը և նրա դերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում. Երևան, 1971. С. С. Аревшатян. Формирование философской науки в древней Армении (V—VI вв.). Ереван, 1973; Ch. Mercier. L'école hellénistique dans la littérature arménienne.—REArm., t. XIII, 1979, pp. 59—75; V. Calzolari. L'École hellénisante. Fait et circonstance.—M. Nicheanian. Ages et usages de la langue arménienne. Paris, 1989, p. 110—129; Գ. Ջահուկյան. Հունարան հայերենը և նրա մշակած նախաձայնների համակարգը.—ՊԻՀ, 1993, № 1—2, էջ 7—14; G. Mouradian. Some Linguistic Peculiarities of the Hellenizing Translations—Le Muséon (forthcoming).

² Գ. Մուրադյան. Խորենացու Երկու աղբյուրի թվագրման շուրջը.—ՊԻՀ, 1990, № 4, էջ 94—104:

³ Հմմտ. Ա. Մուրադյան. նշվ. աշխ., էջ 322—323:

⁴ Հմմտ. Գիրք պիտոյից, աշխատասիրությամբ Գ. Մուրադյանի, Երևան, 1993, էջ 251, 322:

⁵ G. Mouradian, M. Shtrintan. The Armenian Version of Aristotle's Categories In the Context of the Hellenizing School.—Արիստոտելի և Պլատոնի արևելյան թարգմանություններին նվիրված գիտաժողովում ընթերցված զեկուցում, Նևապոլ, 1992:

⁶ A. Terian. Philonis Alexandrini De animalibus. Michigan, 1981, p. 10—12,

դիրը վերականգնելուց՝ այն հայերենից վերաթարգմանելու միջոցով⁷։ Սակայն մեր օրերում Ֆ. Զիդերտը փորձել է հաղթահարել այդ արդելքը, հայերենից հունարեն թարգմանելով Փիլոնին վերադրված «Յաղագս Աստուծոյ» հատվածը⁸։ Մեր համոզմամբ, այդպիսի թարգմանությունը պայմանական պետք է համարել, քանի ղեռ գրան չի նախորդել հայերեն թարգմանության լեզվի և թարգմանական տեխնիկայի խոր ուսումնասիրությունը, և նույնիսկ՝ այդպիսի ուսումնասիրության առկայության դեպքում էլ։ Այդ կարծիքն է հայտնում հմուտ հայագետ Ջ. Բոլոնյեզին՝ էյիոս Թեոնի «Յաղագս ճարտասանական կրթությանը» երկի հունարեն չափազանցված գլուխները հայերենից վերաթարգմանելու առնչությամբ։ Չնայած պահպանված գլուխների թարգմանական տեխնիկայի և հունարեն-հայերեն համարժեքների մանրակրկիտ ուսումնասիրությանը՝ Ջ. Բոլոնյեզին ընդունում է, որ անճշտության մի որոշակի տոկոսն անխուսափելի է⁹։

Փիլոնի երկերի դեպքը շահեկան է այն առումով, որ չնայած նրա ծավալուն ժառանգության մի զգալի մաս պահպանվել է միայն հայերենով (Մենդոց և Նիցի գրքերի մեկնությունները¹⁰, Յաղագս նախախնամության և Յաղագս բան ունել անասուն կենդանեացի)¹¹, հայերեն յոթ երկի հունարեն սկզբնագրերն առկա են¹²։ Բացի այդ, չափազանցված սկզբնագիր ունեցող երկերի հրատարակիչ Մկրտ. Ավգերյանը ոչ միայն թարգմանել է դրանք լատիններենի, այլև տողատակում ներկայացրել այն հատվածները, որոնք մեջբերումների ձևով պահպանվել են այլ հեղինակների երկերում։ Այսպիսով, զոլություն ունեն Փիլոնի բավարար քանակությամբ հունարեն-հայերեն զուգահեռ բնագրեր, որոնք հնարավորություն են ընձեռում հետազոտելու թարգմանչական մեթոդի այս կամ այն առանձնահատկությունը։ Մենք առիթ ենք ունեցել անդրադառնալու դրանցից մի քանիսին¹³ և մատնացույց անելու հունարենից պատճենված մի շարք բառեր և այլ հունաբանություններ, որոնք առաջին անգամ վկայված լինելով Փիլոնի թարգմանություններում, այնտեղից թափանցել են «Պիտոյից գրքի» ոչ թարգմանական մասերի մեջ¹⁴։

Այստեղ արժե մատնանշել մի շարք ուշադրավ հունաբանություններ.

ա) բառապատճենման եղանակով կերտված նորաբանություններ, որոնց մենք այլ տեղ չենք անդրադարձել՝ զազանախառն շն. 279—μειονετα VII. 502, ձիացուլ շն. 279—επιπροσεντα VII. 502, իշակիւ շն. 280—γμενος VII. 504, մարդակիր լինել ժ բան 234—αυθροπασιον VII. 26, խորհրդարան ժ բան 249—βουλεσηριον VII. 56, փաղանուկարար ալար. 146—συνωνυμω I. 230,

⁷ H. Lewy. The Pseudo-Philon De Iona. London, 1936, p. 107—111.

⁸ Philon von Alexandrien. Über die Gottesbezeichnung „wohlthätige verzehrenden Feuer“ (De Deo). Rückübersetzung des Fragments aus dem Armenischen. Deutsche Übersetzung und Kommentar von F. Stegert. Tübingen: Mohr, 1988. — Wissenschaftliche Untersuchungen zum Neuen Testament. 45.

⁹ G. Bolognesi. Remarques sur la tralition bilingue (grecarmenien) des Progyrnasmata d'Ælius Theon. — ՀԱՄԸ (AIEA)-ի գիտաժողովում կարդացած զեկուցում, Միլան, 1992.

¹⁰ Փիլոնի Եբրայեցույ Մեկնութիւն Մենդոց և Նիցի, ճառք ի Սամփսոն, ի Յովհան, աշխատասիրութեամբ Մկրտ. Աւգերեանց, Վենետիկ, 1826:

¹¹ Փիլոնի Եբրայեցույ ԱԲ Յաղագս նախախնամութեան, Գ Յաղագս կենդանեաց, աշխատասիրութեամբ Մկրտ. Աւգերեանց, Վենետիկ, 1822, տես նաև ծան. 6:

¹² Փիլոնի Հեբրայեցույ ճառք որոց հելլեն բնագիրը հասին առ մեզ, Վենետիկ, 1892:

¹³ Գ. Մուրադյան. «Պիտոյից գրքի» հրահանգների թարգմանության մեթոդի շուրջը (հունաբան գաղտնի առաջին շրջանի թարգմանությունների կոնտեքստում). Հայ միջնադարյան գրականության միջադպարին գիտաժողովի (1986) նյութեր (տպագրության ընթացքում):

¹⁴ Գիրք պիտոյից (հմտ. ծան. 4), էջ 257—258, 324—346:

ինքնագործուրիւն ժ. բան 263—αὐτοργία VII. 82, մեծաքաղաք ժ. բան 237—
μεγαπολις VII. 32, համամայր շն. 269—ὑπομήτριος VII. 482, անձնաւորեմ
ալլար. 168—ὕψιχως 1.278, աւճուտ ալլար. 171—ὑψιῶδες 1.280, և հարկու-
րավոր նման կազմութիւններ,

բ) իմաստաւին պատճենման միջոցով ստեղծված տարօրինակ բառա-
կապակցութիւններ՝ Բերթոլդ ծալուց տես. 22—ποιγχαί γε σῖων IX. 116
(բառն այստեղ կիրառված է իր նախնական «ստեղծող, արարող» իմաստով,
իսկ թարգմանիչը արտացոլել է նրա սովորաբար հանդիպող «բանաստեղծ»
իմաստը), որ յուսումնականին դեգլեբել է ժ. բան 230—τοῖς περὶ τὰ μαθηματά
διατριβῶσι VII. 18, որ յուսումնականին դեգլեբել է ժ. բան 230—οὐ περὶ τὰ
μαθηματά διατριβῶντες VII. 58 (διατριβῶν նշանակում է ինչպէս «ժամանակ
անցկացնել» «վատնել», այնպէս էլ «զբաղվել որևէ բանով»)։

դ) ձևաբանորեն անկանոն կազմութիւններ՝ ունոցել իմաստ. 90—
σχεῖν VI. 110, գտոցիլ իմաստ. 78—εὐρεθῆσθεσθαι VI. 88 (հմմտ. Դիոնիսիոս
Թրակացու մոտ՝ «Անհրկոյթք գործաւորականք... սնորոշի՝ կոփոցիլ»¹⁵),
երաժշտացոյց բազն. 204—μερῶσως VII. 273 «երաժշտական դարձրեց»։

դ) մակբայների կամ նախդրավոր կապակցութիւնների հոլովումը կամ
երկրորդ նախդրով օժտվելը՝ ի համապատասխանութիւն հունարեն ողջ կա-
պակցութիւնը գոյականացնող հոգի այս կամ այն հոլովի կիրառութեան՝
աստի անտիքն ալլար. 65—αἱ παρ' ἐχάτερα I. 82, ի ձեռն գլնիցս ալլար.
88—διὰ τῶν ἐξῆς I. 68, զառ ևն ալլար. 134—τῶν πρὸς τὸν ὄντα I, 200,
զ ի մեզս իմաստ. 34—τὰς ἐν ἡμῖν VI. 116, գտցայցն իմաստ. 96—τὰ τούτων
VI 120, ի մեզոյցս իմաստ. 75—τῶν ἐν ἡμῖν VI. 82 (հմմտ. սակայն նույն
արտահայտութեան կանոնավոր հայերեն թարգմանութիւնը՝ որ ի մեզ
իմաստ. 78—τῶν ἐν ἡμῖν VI. 84), որ ի նմայքն իմաստ. 75—τὰ ἐν αὐτῶν VI.
83, ի դրաստոնացն ալլար. 140—τῶν ἐν τῷ παραδείσῳ I. 212. արդիւնքում
ստացվում է նախդիրների կամ հոլովական վերջավորութիւնների կուտակում։

Նշված հունաբանութիւնների կողքին բազմիցս կարելի է գտնել հու-
նարեն բառերի և դարձվածքների ոչ բառացի, նկարագրական թարգմանու-
թեան դեպքեր։ Բերենք մեկ-երկու հետաքրքրական օրինակ. πόντες καὶ πῆσαι X.
162—ամենեքին... արք և կանայք տես 29, θεραπευταὶ... καὶ θεραπευτρίδες IX.
114—բուժիչք ըստ երկուց ազգաց՝ ըստ արուին և ըստ իգին տես. 6։ Οἱ
ἄφ' αἰματος «արյունակից ազգականներ» արտահայտութիւնը թարգմանված
է ճիշտ հայերեն. որք յարենէ (իմաստ. 51—VI. 38) կամ այնոցիկ, որ յա-
րենէ (բժ. 200—VII. 190, շն. 273—VII. 488), բայց և ընդ յարենէսն մեծա-
տրութիւն (տես 10—IX. 12), վերջին օրինակը կարելի է դասել խառնածին
տեսակին, քանի որ ընդ յարենէսն պարունակում է երկու նախդիր և երկու
հոլովական վերջավորութիւն (հմմտ. վերը՝ դ), իսկ մեծատրութիւն բա-
ղադրիչն ավելացրած է իմաստը պարզաբանելու համար և կարող է որակվել
որպէս նկարագրական թարգմանութեան տարր։

Եվ այսպէս, հունարեն թարգմանութեան մեջ առկա են ոչ բառացի
թարգմանութեան դեպքեր։ Այդ կարգի երևույթների շարքին պետք է դասել
հունարեն բառը հայերեն երկու կամ ավելի բառով արտահայտելու փաստը,
որ կարելի է համարել Փիլոնի երկերը հայացնողի թարգմանչական մեթոդի
բնորոշ առանձնահատկութիւններից մեկը։

¹⁵ Н. Адонц. Дионисий Фракийский, с. 49—50.

Փիլոնի թարգմանություններում կան բազմաթիվ այդպիսի օրինակներ, որոնք մենք խմբավորել ենք բոլոր իմաստի և շարահյուսական կապերի, իհարկե, բաժանումը որոշ չափով պայմանական է, և իմքերի միջև երբեմն խիստ սահմանադժեռ չկան:

Իմաստային տարբերակները հետևյալն են.

1. Մեկ հունարեն բառի դիմաց հայերենում երկու հոմանիշ է հանդես գալիս (մենք արձանագրել ենք 114 այդպիսի օրինակ, իրականում դրանք ավելի շատ են).

հրահանգել և խրատել (իմաստ. 38) — πεπειθεύει (VI. 14)

խրատ հանճարոյ (բաղն. 216) — παύει (VII. 196)

սղասաորութիւն պաշտաման (տես. 26) — ὑποσυγία (IX. 155)

որոշել և զատուցել է (տես. 25) — διανεμέλγεται (IX. 154)

մրցում և դուպարը (լին. IV. 228, էջ 426) — ἀγωνισματα

Յ. Կոնիդիոն իր հոդվածում, որի մեջ ապացուցում է, որ Փիլոնի և Իրենեոսի երկերի թարգմանիչը միևնույն անձնավորությունն է¹⁶, նման օրինակներ է բերում Իրենեոսից.

շահ ազտին — το λυσιτελές (էջ 105)

խրատել և հրահանգել — παυευσεντες (էջ 107)

անմուրցը և անդուպարը — ἀπαλειπτος (էջ 108)

1. 1. Այդ հոմանիշների շարքում կան կայուն բառակապակցություններ.

կալ մնալ — (δια-, παρ-, ἐπι-, κατ-) μένει

կրթել և վարժել, վարժ կրթութեան, և այլ տարբերակներ — ἀσχεω, ἀσχηματίζ, μελεταω

2. Հունարեն բառը թարգմանված է երկու հայերեն բառով, որոնք միմյանց մոտ են իմաստով, իսկ մեկն էլ հունարեն բառի բառացի թարգմանությունն է (47 օրինակ).

չափաւոր և համեմատ (տես. 21) — μετρίως (IX. 116)

սրբութիւն կուսութեան (տես. 25) — ἁγνεία (IX. 154)

անբաւ և անհառ (բաղն. 217) — ἀκρίβης (VII. 298)

բազմութիւն ժողովրդեան (իմաստ. 40) — το πλήθος (VI. 16)

իշխանական առաջնորդակամ (այլաբ. 126) — το ἡγεμονικόν (I. 186)

սրէնք և դիր (սղգում ևմ՝ դիր) (իմաստ. 34) — θεσμός (VI. 6)

Ա. Վարդանյանը վկայում է, որ Փիլոնի և Իրենեոսի հայերեն թարգմանությունների մեջ «դիր» բառն օգտագործվում է «օրենքի» իմաստով¹⁷:

2. 1. Այս տեսակի մեջ էլ կան կայուն կապակցություններ.

սուրբ տիրուեան (տես. 25, 27, այլաբ. 126), տիրուեան սուրբ (բաղն. 225, տես. 28) — ἱερός (IX. 156, 158, I. 186, VII. 10, IX. 160)

մինչ վերջինս սովորաբար թարգմանվում է «սուրբ»

կեանք վարուց (իմաստ. 34, 37, 42), վարք կենցաղոյս (տես. 22),

կեանք կենցաղոյս (տես. 13) — ζῆλος (VI. 6, 12, 22, IX. 146, 140)

¹⁶ F. Conybeare. The Age of the Old Armenian Version of Irenaeus. — Յուշարձան. Գրական ժողովածոյ առթիւ 100-ամեայ յոբելիւնի հաստատման Մխիթարեան միաբանութեան Վիեննա (1811—1911), Վիեննա, 1911, էջ 183—202:

¹⁷ Ա. Վարդանյան. Լեզվական նմանություններ Փիլոնի և Իրենեոսի հայ թարգմանություններում մեջ—2Ա 1921 (էջ 443—458), էջ 454:

2. 2. Որոշ դեպքերում երկու թարգմանությունն էլ կարելի է դիտել որպես հավասարապես բառացի (10 օրինակ).

անբաժ և անմասն (իմաստ. 53) — ἀμετάμελον (VI. 42)

մշտաշարժ և յաւետախաղաց (իմաստ. 53) — ἡεὶς ὑπέρτατος (VI. 78)

անճառ և անասելի (նխ. բ. 67) — ἄρρητος

տրտմակից և ցաւակից լինել (իմաստ. 100) — τρυαλίεω (VI. 126)

3. Հունարեն բառի դիմաց հանդես եկող հոմանիշներից մեկը սովորական հայերեն բառ է՝ վկայված դասական բնագրերում, իսկ մյուսը նորաբանություն է, բառապատճենում, որի մեջ արտացոլված է հունարեն բառի ներքին կառուցվածքը (43 օրինակ).

շարունակութիւն յաճախութեան (իմաստ. 81) — συνέχεια (VI. 92)

անպարոյր և անպարագիւր (իմաստ. 52) — ἀπεργραφός (VI. 40)

շարձալցնութիւն միաբանութեան (ալլաբ. 130) — συμφορία (I. 194)

նւրբողեան և գովութիւն (բազն. 216) — ἐγκώμιον (VII. 296)

սնապարծ փառասիրութիւն (իմաստ. 60) — φιλοδοξία (VI. 48)

«Սնապարծ» բառն ինքն էլ պատճենում է հունարեն κενοδοξία բառի՝ վկայած Աստվածաշնչում (Գաղատ. Ե. 26): Հմմտ. նաև Կոնիբերի մատնանշած Իրեննոսի օրինակը.

συμφωνία — միաբան և բաղաձայն (էջ 195):

Հունարեն ἐπιστήμη «գիտելիք» բառը թարգմանված է «հանճար» (նխ. բ. 117), կամ երկու հոմանիշներով՝ «հանճար գիտություն» (բազն. 213—VII. 302) և «հանճար խրատու» (տես. 24—IX. 150): Երկու անգամ էլ՝ «մակացութիւն հանճարոյ» (ալլաբ. 107, 129—I. 150, 190). «մակացութիւն»-ը հիմնված է ἐπιστήμη «գիտելիք» բայի «ժողովրդական ստուգաբանության» վրա, որպես ἐπιστήμη- նախածանցի (հմմտ. «մակ») և ἵσταμαι «կանգնել» բայի արմատի (հմմտ. «կացութիւն») թարգմանություն («մակ-կացութիւն» պարզեցվել և տվել է «մակացութիւն»):

3. 1. Որոշ դեպքերում զույգի մեկ անգամը բառիս բուն իմաստով պատճենում չէ, այլ այսպես կոչված «կիսապատճենում», որի մեջ հունարեն նախածանցին համապատասխանում է հայերեն մակբայը.

ի բաց ճանեալ ընկեցեալ (իմաստ. 35) — ἀφ' ἧρας (VI. 8)

ի մի վայր էած ժողովեաց (ալլաբ. 165) — συνήγαγεν (I. 268)

ձ. ի բաց յափեցեալ և աղատեցեալ (ալլաբ. 142) — ἀπελάλαξεν (I. 218)

ի բաց կալ և հեռանալ (ալլաբ. 136) — ἀφ' ἑσθαι (I. 206)

3. 2. Երբեմն նոր բառը պատճենում չէ, բայց իսկական նորաբանություն է՝ ստեղծված հատուկ որպես տվյալ հունարեն բառի համարժեք և առաջին անգամ վկայված խնդրո առարկա բնագրում.

բնակափոխութիւն գաղթից (իմաստ. 51) — μετακίνησις (VI. 38)

վիժածք և քերածիճք (ալլաբ. 132) — ἀνέκδοκον (I. 196)

լընթացարանս և ի դադանամարտս (տես. 17) — ἐν ταδίοις (IX. 138)

3. 3. Կան առանձին դեպքեր, որոնցում բառերից մեկը հունաբանություն է, սակայն պատճենված է մեկ այլ հունարեն բառից և մեկ այլ առիթով (4 օրինակ):

ճշմարիտ և ստուգարան (բաղն. 214) — εσμεν (VII, 290)

(հմտ. ստուգարանություն — εσμεν λησίζεσθαι Թրակ. թեր. 1)

պարտադիր պատի (ալլար. 128) — γορθεύει (I, 190) (հմտ. պարտադիր փիլ.
իմաստ.)

4. Հունարեն բառն ունի երկու հայերեն համարժեք. մեկը իմաստային պատճենում է, որն առանձին օգտագործվելու դեպքում անիմաստ կթվար, մյուսը՝ թարգմանություն է ըստ իմաստի.

դմենայ և բառական մեկնել (ալլար. 131). — θεινός ερμενεύσας

(I, 194) (θεινός 1. տարափիլի, 2. ումեղ, գորեղ, 3. հմտ.)

դմեղակույրին ճարտարութեան բանից (տես. 28) — θεινότης λογών (IX, 154)

սիրագոյն և իսկադոյն (լին. II, 59, 142—143) — χυρωτερων

իսկադոյն և տիրագոյն (իմաստ. 41) — χυρωτερων (VI, 20) (չարա 1. որպես տեր.

2. վստահարար, 3. իսկապես)

Հմտ. տիրարար իսկապես (Իրեն Հերթ. 182)¹⁸ և Արիստոտելի Ստորոգութեան
թյուններում՝ տիրագոյն և իսկադոյն — χυρωτατα¹⁹:

արդարե (և) Լապես (իմաստ. 40, 82, 86, ալլար. 130, 150) — τω οντι (VI, 18,

94, 194, 240) οντως (VI, 100):

«Արդարե»-ը թարգմանում է իմաստը, իսկ «էպպէս»-ը բառացի թարգմանություն է, «է» բառական ձևից արհեստականորեն կաղավաթ մակբայ:

5. Եթե հունարեն բառն ունի տարբեր իմաստներ՝ ուղիղ և փոխաբերական, նախնական և հատուկ քրիստոնեական, այն կարող է թարգմանվել երկու հայերեն բառով, որոնցից յուրաքանչյուրը համապատասխանում է նրա իմաստներից մեկին (24 օրինակ).

վաճառ և հրապարակ (իմաստ. 37) — χυρζ (VI, 14)

(չչոք 1. հրապարակ, 2. շուկա)

օտար և հիւր (լին. IV 20, էջ 260) — τεινος (1. հյուր, 2. օտար, օտարական)

շարժեալ վրդովեցաւ (իմաստ. 44) — εχινυθη (VI, 26)

(չիւեւ 1. շարժել, 2. հուզել, անհանգստացնել)

նադելի և պարկեշտ (տես. 13, 31, բան 240), պարկեշտ և նադելի

(տես 12) — σεμνος (IX, 13, 168, VII, 38, IX, 128)

(σεμνός — 1. հանդիսաւոր, հարգելի, հմտ. «Նադելի», ինչպես նաև այդ բառի թարգմանությունը երկու հոմանիշով. σεμνοτατος (I, 154 — նազագոյն և հոշակաւոր (ալլար. 103), σεμνός (I, 188, VI, 6, VI, 18) — նազել և հրնուել (ալլար. 147), հոշակեցուցեալ՝ պանծացուցանել (իմաստ. 34), պանծալի հոշակեցուցանել (իմաստ. 40), 2. համեստ, հմտ. «պարկեշտ»):

Հունարեն γεινέσθαι «արարչություն» բառը՝ որպես Աստվածաշնչի առաջին գրքի վերնագիր, ունի երկու դասական համարժեք. «ծնունդը» («Գիրք ծննդոց») և «արարածը» («այս ևն գիրք արարածոց» ծննդ. Բ. 4, Ե. 1): Փիլոնի հայերեն տարբերակում այն սովորաբար թարգմանվում է «լինելու»

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Հայերեն բնագիրը տե՛ս F. Conybeare. A Collation with the Ancient Armenian Versions of the Greek Text of Aristotle's Categories... p. 113 (Anecdota Oxoniensia, Classical Series, I, 6). Oxford, 1892, հունարեն բնագիրը տե՛ս Aristotle. The Categories. On Interpretation. Prior Analytics, II. Trenchard London, 1967, p. 24.

թիւն»։ Հունարեն *γυνή* բայը, որից կազմվել է *γυνεὺς*-ը, ունի երկու հիմնական իմաստ. 1. ծնվել, ստեղծվել (հմտ. «ծնունդ», «արարած»), 2. լինել (հմտ. «լինելութիւն» և սլավոնական *Быти*)։ Սակայն Փիլոնի մոտ հանդիպում է նաև «ծնունդ լինելութեան» (շն. 283—VII. 510, շն. 273—VII. 496), «լինելութիւն ծննդեան» (քհ. 187—VII. 164) և «անեղ անծին» (այլաբ. 122)—*ἀγνητός* (I. 178)։ Հմտ. և Իրենեոսի մոտ՝ *γυνεὺς* «ծննդեան լինելութիւն» (Conybeare, p. 195)։

Հունարեն *ἐργαζομαι* բառը՝ «որակ բանից զուրկ» իմաստով թարգմանվել է «ամալի և անապատ» (քհ. 192—VII. 172) և «աւերակ և անապատ» (շն. 277—VII. 498), քանի որ այն ունի և «անապատ» իմաստը, իսկ *ἐργαζομαι* IX.I—«անմարդութիւն և ամայութիւն» (տեսական 33). թերևս առաջին տեսակից է՝ «երկու հոմանիշ»։

6. Մեկ հունարեն բառի իմաստը երկու հայերեն բառով արտահայտելու արտառոց մի տեսակ էլ կա. *ποῖος* («ինչպիսի») բառը սովորաբար թարգմանվում է «որակ» բառով (այլաբ. 148—I. 236), իսկ *ποσότης* («որպիսութիւն»)՝ «որակութիւն» (բան 230—VII. 20, բազն. 213—VII. 290, այլաբ. 149—I. 238) կամ «որակ» (տես. 7—IX. 114). հմտ. նաև *ποῖον* (VII. 20)—«որպիսութիւն» (բան 230) և *ἄπορος* (I. 274, VII. 290)—«անորակ» (այլաբ. 168, բազն. 213)։ Երկուսն էլ արհեստական կազմութիւններ են, հմտ. նույնատիպ «քանակութիւն» (բան. 230)—*ποσότης* (VII. 20), նաև «քանիութիւն» (բան 230, նխ. բ. 81)—*ποσόν* (VII, 20), *ποσότης*. «տեսակ» (բազն. 214, այլաբ. 145)—*ἰδέα* (VII, 290), *εἶδος* (I, 230), «ունակութիւն» (այլաբ. 145)—*εἶς* (I. 236)։

Սակայն որոշ դեպքերում «որակ» կամ «որակութիւն» բառին կցվում է «առնել» բայի հիմքից կազմված բայանուն, կարծես *ποῖος*-ը ստանում է մի երկրորդ, զուգահեռ ստուգաբանում, որպես *ποῖος* «անել» բայի հետ առնչվող մի բառ.

որակը արարուած (այլաբ. 128, 133)—*ποῖος* (I. 190, 198)

որակութիւն արարչութեան (բազն. 168)—*ποσότης* (VII, 274)

որակութիւն և արարուած (այլաբ. 122)—*ποῖος* (I. 178)

անորակ և անարարուած (այլաբ. 117, 122)—*ἄπορος* (I. 170, 178)

7. Կան դեպքեր, երբ հունարեն բառը թարգմանված է երեք կամ ավելի հայերեն բառով։ Մեծ մասամբ դրանք հոմանիշներ են և պատկանում են առաջին խմբին։

ետեւ և էգիտաց և էհաս (իմաստ. 52)—*κατεῖεν* (VI. 40) (*ῥάω* «տեսնել» բայի աորիստն է *εἶεν*, հմտ. «ետես», իսկ պերֆեկտը՝ *οἶδα*, ունի յուրահատուկ իմաստ՝ «գիտենալ», հմտ. «էգիտաց և էհաս»)

Նկարագրված երևույթն, ինչ խոսք հակասում է հունարեն թարգմանութիւնների բառացիութեան սկզբունքին։ Մեր կարծիքով նրա հիմքում ընկած է «նույնանիշ և հոմանիշ բառերի ավելադրութիւն» ոճական ձևը, որ հատուկ է դասական լեզվին²⁰ (1,2) և բնորոշ է դասական շրջանի թարգմանութիւնների համար. հմտ. Անկյուրայի ժողովի կանոնների թարգմանու-

²⁰ Ա. Աբրահամյան. Գրաբարի ձևաբան. Երևան, 1976, էջ 381—385, հմտ. նաև Վրթ. Չալըրյան. Քերականութիւն հայկազեան լեզուի, հանդերձ փոփոխմամբ աշխատասիրելի ձ. Արսեն Վ. Այտրենեան, Վիեննա 1885, էջ 466—468։

թյան մեջ՝ *τελειον*²¹ կատարելալ և զլիսաւոր²²։ Այն դեպքում, երբ զույգի անդամներից մեկը բառապատճենում է (3,4), այդպիսի զույգի առկայությունը կարելի է բացատրել որպես նոր հայերեն բառ ստեղծելու և լիզվում դուրսից ունեցող բառով այն մեկնաբանելու փորձ։ այսպիսով, հունարեն բառի թարգմանությունը ճշգրիտ է ձևի և պարզ՝ իմաստի առումով։ Երկու իմաստները (5) կամ ստուգաբանությունները (6) ներկայացնելը հավանաբար ծառայել է թարգմանությունը «զարդարելուն»։

Ինչ վերաբերում է խնդրո առարկա երևույթի շարահյուսական տարբերակներին, ապա զույգերի մեծամասնության կառուցվածքը համադասական է։

ա) շաղկապով.

հրահանգել և խրատել (իմաստ. 38—VI. 14) (բայ)

զարթուցանել և զրդռել (տես. 27—IX. 158) (անորոշ դերբայ)

անբաւ և անճառ (բաղն. 217—VII. 298) (ածական)

սրբարար և սգատարար (մակբայ)

Հունարեն ածականի կամ մակբայի համեմատական կամ դերադրական աստիճանն արտահայտվում է սովորաբար թարգմանության զույգի անդամներից մեկով.

նազադոյն և հոշակաւոր (այլար. 109) — *σεναυτορον* (I. 154)

յատնագոյն և երեկի (իմաստ. 41) — *εναρξιστερος* (VI. 28)

դիպողադոյն և ի ճահ (այլար. 144) — *επιτελοιστορον* (I. 164)

պարտ և արժան է և ճահադոյն և ի դիպ (իմաստ. 47) — *εὐλογοιστερος* (VI. 32)

Երբեմն այդ համեմատական կամ դերադրական աստիճանը թարգմանության մեջ ձևաբանորեն չի արտահայտվում.

յատնապէս երեկի (եւ. II 2, 468) — *εμφανιστερος*

անզգամ և անիմաստ (մ. բան. 236) — *τινωμυνοιστερος* (VII. 36)

զեղեցիկ և սքանչելի (տես. 25) — *καλλιστος* (IX. 154)

կամակ և սրտահաճոյ (այլար. 96) — *θυμηρεσστη* (I. 120)

ինքնահաճ և վիս (բաղն. 206) — *αὐθαισθετος* (VII. 276)

նաղելի և սլարկեշտ (տես. 13) — *σεμυτερος* (IX. 130)

հեշտ և կամակ (իմաստ. 38) — *ἡοισ* (VI. 14)

Համեմատական աստիճանը կարող է առկա լինել թարգմանության մեջ այն դեպքում, երբ հունարեն ածականը կամ մակբայը դրական աստիճանով է. ճահագոյն և ի դիպ (այլար. 114) — *πρόσφορος* (I. 164)

բ) առանց շաղկապի.

մարտիկ ըմբիշ, մարտիկ նահատակ, (իմաստ. 41—I. 20)

դասուր կարգաւ (տես. 27—IX. 158) (գոյականներ)

իշխանական առաջնորդական, սուրբ տէրունեան (ածական)

հակառակ ընդդէմ (բաղն. 158—VII. 266), արդարեւ էական

(մակբայ)

բառնալ լրանել թողուլ (իմաստ. 49—VI. 34) (անորոշ դերբայ)

կայ մնայ (բայ, դասական կայուն կապակցություն է)

Հանդիպում է և ստորադասական կառուցվածք.

ա) երկու գոյական, որոնցից մեկը՝ սեռականով (դասական լեզվի՝ «գոյական անունների սեռականով ավելադրությունն» է).

²¹ Fr. Lauchert. Die Kanones der Altkirchlichen Concilien. Freiburg und Leipzig, 1896, S. 31.

²² Կանոնագիրը Հայոց, հ. Ա., աշխատասիրությունը վ. Հակոբյանի, Երևան 1964, էջ 156:

խրատ հանճարոյ (բաղն. 216), տոփանք ցանկութեան (իմաստ. 51),
հաշիւ համարոյ (իմաստ. 44) սպառաւորութիւն որաշտաման (տես. 26),
ցոյց օրինակի (տես. 22), տիպ կերպարանաց (իմաստ. 52), վարժ
կրթութեան (տես. 17, իմաստ. 46) (29 օրինակ),

բ) դոյական՝ ածական որոշիչով. համադամ ցանկութիւն (շն. 268),
սնապարծ փառասիրութիւն (իմաստ. 60), նազելի պարկեշտանոց (տես.
31 — τὰ σευνεῖα IX. 168), գ) դիմավոր բայը անցյալ դերբայով (դասական
լեզվի «դերբայական ավելադրութիւնն» է). միարանեալ հաւանեցալ (իմաստ.
43), բարձեալ քողին (իմաստ. 50), սուգեալ ընկղմեցան (իմաստ. 44), ար-
ծակեալ բառեալ քողու (իմաստ. 37):

31 օրինակով ներկայացրած մի մեծ խումբ կա, որի մեջ «անցեալ» դեր-
բայը կցված է դիմավոր բային՝ «գնալ» (8 դեպք), «նստել» (8 դեպք), «կալ»
(9 դեպք) և այլն: Որոշ դեպքերում իմաստը ճշգրտելու համար ավելացրած
է այս կամ այն մակբայը.

մատ անցեալ նստի (այլաբ. 129) — περιχθίζται (I. 190)
մեկուսի անցեալ կալ (այլաբ. 134) — ἀφίστηχε (I. 200)
ի մէջ անցեալ ցոյցս առնեն (տես. 14) — παρεπιθεύουµεναι (IX. 170)
որք յոտն անցեալ կան (տես. 28) — πρσεστωτες (IX. 160)
որք ի վերայ անցեալ նստին (բճ. 200) — τοὺς ἐφίθρουσ (VII. 190)
որ ի վերայ անցեալ նստի (այլաբ. 175) — τὸν ἐπιβέβηχότα (I. 286)
որ ի վերայ անցեալ կայր (իմաստ. 52) — ἐφεστώτα (VI. 40)
ի բաց անցեալ կան (իմաստ. 83) — ἀφίστανται (VI. 96)
անցեալ գնայր ի բաց (իմաստ. 77) — ἐξίγει (VI. 86)
ի խոնարհ անցեալ մնալ (իմաստ. 77) — καταµένειν (VI. 86)

Վեց անգամ «անցանել» բայի դիմավոր ձևն է կցված հիմնական բա-
յին, որպէս համադաս ստորոգյալ՝ առանց շաղկապի, մեկ անգամ՝ շաղ-
կապով.

անցանէ գնայ (իմաստ. 40) — τυχῶρησθ (VI. 18)
անցին մնացին (այլաբ. 153) — κατεµεῖναν (I. 246)
էանց լռեաց (այլաբ. 159) — περισιωπησεν (I. 128)
անցցէ վճարել (այլաբ. 161) — ἐπέξελθθ (I. 262)
էանց եկաց (իմաստ. 88) — στας (VI. 104)
էանց էգնաց (իմաստ. 52) — ἵχολούθησε (VI. 40)
էանց և էգնաց (բաղն. 170) — ἀνεχώρησεν (VII. 278)

Ակներե է, որ ո՛չ «անցեալ» դերբայը, ո՛չ էլ նույն բայի դիմավոր ձե-
վերը չեն փոխում հիմնական բայի իմաստը. թերևս դրանք կիրառվում են
անցյալ կատարյալ կամ հարակատար ժամանակային նրբերանգներ արտա-
հայտելու համար կամ նույնիսկ դեկորատիվ դեր են կատարում: Վերջինս
պարզորոշ արտահայտված է «Պիտոյից գրքի» ոչ թարգմանական մասերում,
որոնք լեզվական առումով մեծապէս ազդված են Փիլոնից, և որոնցում «ան-
ցեալ» դերբայը կցվում է շատ ուրիշ բայերի²³:

Փիլոնի թարգմանություններում երբեմն մեկ բառի դիմաց հանդիպում
են ավելի բարդ կապակցություններ. կցորդութիւն հասարակութեան տանել
(իմաստ. 46) — κοινωνῆσαι (VI. 28), այն որ եածն անցոյց (այլաբ. 169) —
ἀγαγόντος (I. 276), անուանի և նշահաւոր հռչակեալ (տես. 24) — διαγομίσ-
νους (IX. 150), պանծալի հռչակեցունցան (իմաստ. 40) — σεμνύει (VI. 18),

23 Տե՛ս Գիրք պիտոյից, էջ 258:

առաջի յանդիման կացացանէ (*Ել.* II, 60, 474) — *παραστήξεν*, ընդ վարժ կրթութեան անցեալք (*տեւ.* 20) — *ιδουμένοι* (IX. 142), որակացեալ և արարուած ընկալեալ և (*ալլար.* 127) — *πεποιήται* (I. 188), առանց բաղրադայից և առանց բամբասանաց (*բաղն.* 205) — *ἀνοπαίτως* (VI, 274), որ յինքնէ ի բաց հանեալ ընկեցեալ և (*իմաստ.* 35) — *αφηρημένον* (VI, 8), որ նախահոգութիւն խնամոց տանի (*ալլար.* 114) — *πρόμνησεν* (I. 146), ընդ հովուապետն և ընդ հատեօքեցն խաշանց (*իմաստ.* 87) — *προεστίχον* *τῶν* *ὑπερμαχτων* (VI. 104), յորոց լուռ կալ և դադարել արժան և (*իմաստ.* 40) — *τῶν* *ὑπομαχτων* (VI. 18):

Փիլոնի թարգմանութիւնների մեր քննարկած լեզվական առանձնահատկութիւնը ստիպում է հղրակացնել, որ «դասական» և «հունարան» թարգմանութիւնների մեթոդի և լեզվի մասին մեր ունեցած պատկերացումները ճիշտ են միայն ընդհանուր առմամբ. առանձին բնագրերի մանրադնին ուսումնասիրութիւնը կօգնէր ավելի ճշգրիտ, ավելի իրական պատկերը վերականգնելուն:

НЕКОТОРЫЕ ЯЗЫКОВЫЕ ОСОБЕННОСТИ ДРЕВНЕАРМЯНСКИХ ПЕРЕВОДОВ ТРУДОВ ФИЛОНА АЛЕКСАНДРИЙСКОГО

Г. С. МУРАДЯН

Резюме

Переводы трактатов Филона Александрийского, относящиеся к первому этапу деятельности грекофильской школы (вторая половина V в.), содержат большое количество лексических, синтаксических, фразеологических и грамматических гречизмов. Однако они далеки от того, чтобы каждое греческое слово или конструкция имели определенный армянский эквивалент. Наоборот, в них присутствует значительное число элементов свободного, описательного перевода, свойственных произведениям, переведенным в классический период. Одним из наиболее ярких проявлений свободного перевода является пристрастие переводчика к передаче одного слова оригинала двумя и более словами. Такие случаи классифицированы по семантическим (перевод слова: а) двумя синонимами, б) близкими по значению словами, одно из которых передает греческое слово буквально, в) синонимами, один из которых — обычное, «классическое» армянское слово, другой же — неологизм, калька с греческого, г) словами, одно из которых — семантическая калька, другое же передает значение греческого слова, д) словами, передающими разные значения греческого слова, е) словами, одно из которых отражает правильную этимологию греческого слова, другое же — «народную») и синтаксическим признакам (члены пары находятся в отношениях сочинения, с соединительным союзом или без, либо же подчинения: а) существительное с существительным в генетиве, б) существительное с прилагательным определением: в) личный глагол с причастием прошедшего времени и т. д.). Наличие элементов описательного перевода в грекофильских текстах свидетельствует о том, что попытки реконструирования некоторыми учеными утраченных греческих оригиналов путем обратного перевода с армянского следует рассматривать как нечто условное.